ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
OFFICE OF THE PRIME-MINISTER OF THE REPUBLIC OF ARMENIA
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
DEPARTMENT OF INFORMATION AND PUBLIC RELATIONS

Երեքշաբթի, 4 հունվարի 2022 թ.

«Factor.am» լ/կ լրագրող
Նարեկ Կիրակոսյանին

Հարգելի պարոն Կիրակոսյան,

Ի պատասխան Ձեր հարցման՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ վարչապետի՝ ծառայողական ավտոմեքենաներով սպասարկումն իրականացվում է Պետական պահպանության ծառայության կողմից:

«Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածում ամրագրված է, որ պետական պահպանությունն իրականացվում է գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների կիրառման համակցության սկզբունքներով, իսկ նույն օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ Պետական պահպանության ծառայությունում պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանությունն իրականացվում է պետական և ծառայողական գաղտնիքի մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Հայցվող տեղեկությունը, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 12-րդ հոդվածների համաձայն՝ ընդգրկված է գաղտնագրման ենթակա տեղեկությունների հաստատված ցանկում, ուստի և նույն օրենքի համաձայն դասվում է պետական և ծառայողական գաղտնիքի շարքին:

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային առևտրային գաղտնիք:

Ելնելով վերոգրյալից՝ Ձեր բարձրացրած հարցերի շուրջ (ՀՀ վարչապետին սպասարկող ավտոմեքենաների մասով) տեղեկություն տրամադրելը հնարավոր չէ:

Հեռախոս՝ (374 10) 52-87-12
Phone: (374 10) 52-87-12
Էլ.փոստ՝ press@gov.am
Կայքէջ՝ www.gov.am

Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ վարչապետին և աշխատակազմի բարձրաստիճան այլ պաշտոնատար անձանց սպասարկելու համար էլեկտրամոբիլներ ձեռք բերելու վերաբերյալ ներկա փուլում քննարկումներ չկան:

Կատարող՝ Պետական պահպանության ծառայություն
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչություն

Տեղեկատվության և հասարակայնության հետ
կապերի վարչության պետ
Արմեն Խաչատրյան